**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**<< 18 >> հունիսի 2013թվականի N 63 -Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈՂՈՑ>>-Ը, <<ԿՈՄՍՈՄՈԼԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ>>-Ը ԱՐՏԱՇԵՍ ՎԱՍԻԼՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21-րդ կետով, 32-րդ հոդվածի 15-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր-մարմին սահմանելու մասին>> N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի II բաժնի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2013թվականի 03-ի N 02/10.1/1983-13 գրությունը և Արտաշես Վասիլյանի ժառանգների գրավոր խնդրանքը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Անվանափոխել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող <<Կոմսոմոլի փողոց>>-ը՝ <<Արտաշես Վասիլյան փողոց>>, <<Կոմսոմոլի փողոց 1-ին նրբանցք>>-ը՝ <<Արտաշես Վասիլյան փողոց 1-ին նրբանցք>>:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի <<Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության>> բաժնին՝ կազմակերպելու վերը նշված փողոցի անվանատախտակի պատրաստման և տեղադրման հետ կապված աշխատանքները:

3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի <<Ֆինանսատնտեսագիտական>> բաժնին՝ կատարելու անվանատախտակի պատրաստման և տեղադրման համար անհրաժեշտ վճարումը՝ համաձայն ներկայացված ակտերի:

4. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել անվանումների ռեգիստր վարող պետական լիազոր մարմնին՝ անվանափոխման պետական գրանցում իրականացնելու համար:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Գյումրու բաժին, հրապարակել մամուլում և հեռուստատեսությամբ:

Կողմ (11) Դեմ(0) Ձեռնպահ(0)

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ